

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ոսկրահնայի
Նախարարների կաբինետի միջև կառավարական
կապի բնագավառում
համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ոսկրահնայի
Նախարարների կաբինետը, այսուհետ՝ Կողմեր,
դեկլարավելով երկու պետությունների միջև գոյություն ունեցող
բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդման ձգտումով,
հաշվի առնելով միջպետական կառավարական կապի պահպանման և
զարգացման գործում Կողմերի շահագրգռվածությունը,
հաշվի առնելով Անկախ Պետությունների Համագործակցության
շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ոսկրահնայի միջև
կնքված պայմանագրերը և համաձայնագրերը,
ելնելով այն հարաբերությունների հստակ կանոնակարգման
հրատապությունից, որոնց հիմքերն են փոխադարձ վստահությունը և հարգանքը
միմյանց նկատմամբ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացությունները նշանակում են
հետևյալը.

«իրավասու մարմիններ»՝ Հայաստանի Հանրապետության ազգային
անվտանգության նախարարությունը և Ոսկրահնայի անվտանգության
ծառայությունը,

«կառավարական կապ»՝ ծածկագրված հեռախոսային և փաստաթղթային
կապ,

«միջպետական կառավարական կապ»՝ Հայաստանի Հանրապետության և
Ոսկրահնայի կառավարական կապի բաժանորդների միջև տեղեկատվության
փոխանակման համար նախատեսված կառավարական կապի համակարգ,

«ծածկագրման միջոցներ»՝ ձեռքի ծածկագրեր, ծածկագրման և
գաղտնագրման սարքավորում, գաղտնի պահեստային գույք և դրանց
պատկանելություններ, նորմատիվ և տեխնիկական փաստաթղթեր, ծածկագրման
բանալիներ և դրանց պատրաստման սարքավորումներ:

Հոդված 2

Կողմերն ապահովում և կատարելագործում են մշտապես գործող
միջպետական կառավարական կապը:

Կողմերից յուրաքանչյուրը հավասար իրավունքներ ունի մյուս Կողմի շահերը
շոշափող միջպետական կառավարական կապի կազմակերպման, տեխնիկական
շահագործման և անվտանգության ապահովման հարցերը լուծելիս:

Միջպետական կառավարական կապի կազմակերպման, տեխնիկական շահագործման, անվտանգության ապահովման և անխափան գործման հարցերը լուծվում են իրավասու մարմինների կողմից:

Հոդված 3

Կողմերից յուրաքանչյուրն իր պետության տարածքում կառավարական կապ է տրամադրում մյուս Կողմի պետության պաշտոնատար անձանց իր տարածքում գործող կարգին համապատասխան, եթե Կողմերի մյուս միջազգային համաձայնագրերով և պայմանագրերով այլ պայմաններ չեն վերապահվում:

Հոդված 4

Մի Կողմի պետության պաշտոնատար անձանց՝ մյուս Կողմի պետության տարածքում ժամանակավոր գտնվելիս, կառավարական կապը տրամադրվում է իրավասու մարմինների կողմից սահմանված ծավալով և կարգով: Դրա համար անհրաժեշտ կապի ալիքների և բաժանորդային գծերի կազմակերպումը, ինչպես նաև կառավարական կապի միջոցների տեղադրումն իրականացվում է շահագրգիռ Կողմի հաշվին:

Հոդված 5

Իր պետության սահմաններում միջպետական կառավարական կապի կազմակերպման, գործողության մեջ մտցնելու, տեխնիկական շահագործման և հետագա կատարելագործման հետ կապված ծախսերը Կողմերից յուրաքանչյուրը վճարում է ինքնուրույն:

Երրորդ պետությունների տարածքով անցնող կապուղու վարձակալության ծախսերը բաժանվում են հավասարաչափ:

Հոդված 6

Կողմերը փոխշահավետ պայմանների հիման վրա իրավասու մարմիններին հանձնարարում են՝

միջպետական կառավարական կապի, ինչպես նաև կառավարական կապի ազգային ցանցերի համար նոր համակարգերի և միջոցների մշակման և արտադրության բնագավառում իրավասու մարմինների միջև համաձայնեցված առանձին փաստաթղթերով որոշված կարգին համապատասխան անցկացնել գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական աշխատանքներ,

փոխգործակցել կառավարական կապի միջոցների արտադրության բնագավառում,

փոխգործակցել գաղտնագրային պաշտպանության և տեխնիկական կապուղիներից տեղեկատվության արտահոսքի պաշտպանության բնագավառի հարցերի լուծման գործում,

իրականացնել իրավասու մարմինների կադրերի պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը,

իրականացնում են փոխգործակցություն Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի կառավարական կապի ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսային համատեղելիության ապահովման նպատակով իր պետության տարածքում նրա կողմից տրամադրված հաճախության սպեկտրի օգտագործման հարցերով:

Թվարկված ուղղություններով համագործակցությունն իրականացվում է իրավասու մարմինների կողմից համաձայնեցված առանձին փաստաթղթերով սահմանված կարգին համապատասխան:

Հոդված 7

Կառավարական կապի միջպետական և ազգային ցանցերի շահագործման ու կազմակերպման համար անհրաժեշտ ծածկագրման միջոցների, տեխնիկայի և կապի միջոցների, համալրման արտադրանքի և պահեստամասերի համաձայնեցված ծավալներով փոխադարձ մատակարարումները, ինչպես նաև՝ նշված սարքավորումների վերանորոգման և հատուկ նշանակության ծառայությունների տրամադրման կազմակերպումն իրականացվում են կնքված պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա՝ երկու պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 8

Կողմերը հանձնարարում են իրավասու մարմինների, փոխհամաձայնեցված պայմանների հիման վրա, իրենց զինվորական ներկայացուցչությունների միջոցով, համապատասխան ձեռնարկություններում իրականացնել ծածկագրման միջոցների, տեխնիկայի և կապի միջոցների, լրակազմող արտադրանքի և պահեստամասերի մշակման, պատրաստման, մատակարարման և շահագործման զինվորական հսկողությունը:

Հոդված 9

Կողմերը սահմանում են, որ սույն Համաձայնագրից բխող հարցերի իրականացման գործում իրավասու մարմինների փոխգործակցության ընթացքում ռուսերենը հանդիսանում է աշխատանքային լեզու:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է տասը տարի ժամկետով և գործողության մեջ է մտնում Կողմերի կողմից այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ճանապարհով ստանալու օրվանից:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգի հետագա տասնամյա ժամանակաշրջանների համար, եթե Կողմերից յուրաքանչյուրը, Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան վեց ամիս առաջ չի հայտնի Համաձայնագրի գործողությունն ավարտելու իր ցանկության մասին:

Հոդված 11

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը, իր մտադրության մասին դիվանագիտական ճանապարհներով գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը կդադարեցվի մյուս Կողմի կողմից այդպիսի ծանուցումն ստանալու օրվանից վեց ամիս հետո:

Հոդված 12

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել, որոնք կձևակերպվեն կից արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգով:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում, Կողմերի իրավասու մարմինները դրանք կլուծեն բանակցությունների (խորհրդակցությունների) ճանապարհով:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի հոկտեմբերի 5-ին երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2003 թվականի հոկտեմբերի 28-ին: